

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ  
2008թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2008թ. ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

**1. Մտից թղթակցություն՝**

- ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ – 95 միավոր,
- բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2194 միավոր),
- գ/ ՀՀ ԱՎԾ տարածքային ստորաբաժանումներից (703 միավոր),
- դ/ արտասահմանյան երկրներից (1384 միավոր), այդ թվում՝  
ԱՊՀ երկրներից (59 միավոր) :

***Ընդամենը 4376 միավոր (2007թ.-ի 5950 միավորի դիմաց):***

**2. Ելից թղթակցություն՝ 10876 միավոր (2007թ.՝ 11560 միավորի դիմաց)**

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2008թ. ընթացքում կազմել է 15252 միավոր (2007թ.՝ 17510 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2008թ.-ին 2007թ. համեմատությամբ նվազել է 1574 միավորով, իսկ ելից թղթակցությունը՝ 684 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2008թ. ընթացքում վերահսկողություն է սահմանվել 165 փաստաթղթի և հանձնարարականի (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, այլ նախարարություններից գրություններ և այլն) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: